

Պատասխան

Ազատ ջրօգտագործում է համարվում՝

- 1) այնպիսի ջրօգտագործումը, որը նպատակաուղղված չէ շահույթ ստանալուն.
 - 2) հանգստի, լողալու, ջրային մարզաձևերով (այդ թվում՝ առանց շարժիչների օգտագործման ջրային սպորտաձևերով) զբաղվելը.
 - 3) կարթով ձկնորսությունը և սպորտային որսորդությունը.
 - 4) տեղումների օգտագործումն անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում.
 - 5) ջրի օգտագործումը հակահրդեհային նպատակներով.
 - 6) էկոլոգիական նպատակներով սանիտարական ելքերի համար ջուր վերցնելը:
- Եթե ազատ ջրօգտագործումը խախտում է կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը պետք է կանոնակարգի այդ գործողությունը՝ կիրառելով սույն օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվություն տալու ընթացակարգը, ինչպես նաև ապահովի այլ կանխարգելիչ միջոցառումներ՝ ջրային ռեսուրսները պահպանելու համար:
- («Ջրային օրենսգիրք, հոդված 22):